Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց »ՊՈԱԿ

Առարկա՝ Դասվար

Թեմա՝«Ուսումնառության ակտիվ մեթոդները սովորողների ներգրավվածության բարձրացման միջոց»

Մենթոր՝ Նաիրա Անանյան

Ուսուցիչ՝ Լիանա Ղարաքեշիշյան

2023

Բովանդակություն

1. Ներածություն _____էջ 3-4
2. Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդները_____էջ 5-14
3. Ակտիվ ուսուցում.Բնութագրեր,ոճեր և ռազմավարություններ_____էջ 15-17
4. Ուսուցման ակտիվ մեթոդներ _____էջ 18-27
5. Դասի պլան 1_____ _ էջ 28-29
6. Դասի պլան 2_____ էջ 30-31
7. Եզրակացություն_____ էջ 32-33
8. Օգտագործված գրականություն և հղումներ_____էջ 34

Ներածություն

Թեմայի արդիականությունը.

Աշխարհում չկա ավելի հանդիսավոր հիմն,քան մանկական շուրթերի թոթովանքը:

Վ.Հյուգո

Եթե այսօր իմ աշակերտներին սովորեցնեմ ինչպես որ երեկ եմ սովորեցրել,ապա ես նրանցից կգողանամ նրանց վաղվա օրը:

Ժամանակակից դպրոցը բաց միջավայր է:Այդ միջավայրում արդյունավետ կրթություն իրականացնելը պայմանավորված է բազմաթիվ նորամուծություններով՝ հետաքրքիր և բազմաբովանդակ մեթոդներով,հնարներով և խաղերով:

Ժամանակակից դպրոցի տեղեկատվության բազմազանությունը դասը դարձնում է ծանրաբեռնված կրտսեր դպրոցականների համար:Այդ ծանրաբեռնվածությունը ստիպում է մտածել,թե ինչպես անել,որպեսզի հետաքրքիր անցնի դասի ընթացքը,թե ինչպես նպաստել ուսումնասիրող նյութի նկատմամբ հետաքրքրության առաջացմանն ու ողջ դասի ընթացքում նրանց ակտիվ գործունեության ապահովմանը: Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է:Շատ կարևոր է ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը:Ժամանակակից մեթոդները օգնում են ակտիվացնել երեխաներին,ստեղծել այնպիսի իրավիճակներ,որոնք նպաստում են երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն առարկաների,մասնավորապես թեմաների նկատմամբ:Ներկայումս ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին դարձնել ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից:Մեթոդների կիրառման ժամանակ երեխաները հաճույքով են հաղթահարում ծագած դժվարությունները ուսուցանող նյութի վերաբերյալ,փորձում են իրենց ուժերը,զարգացնում են ընդունակությունները:Մեթոդների կիրառման դեպքում դասերը դառնում են հագեցած բազմապիսի հնարներով,խաղերով:Ուսումնական նյութի յուրացումը դառնում է հետաքրքրիր,գործունեությունը գրավիչ,թեթևացնում է գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման գործընթացը:Ուսուցչի հիմնական խնդիրը դառնում է սովորել սովորեցնելը:Ժամանակակից մեթոդների կիրառումը հիմք է հանդիսանում ուսուցման գործընթացում աշակերտների՝ որպես գործընկերների սոցիալական շփման

համագործակցության:Կիրառելով արդյունավետ մեթոդներ՝ ապահովում ենք սովորողների բազմակողմանի զարգացումը:

Հետազոտության նպատակը

Ուսումնասիրել ակտիվ մեթոդներով պլանավորած դասերի արդյունավետությունը և երեխաների մասնակցությունը այդ դասերին:

Հետազոտական հարց

Արդյո՞ք ակտիվ մեթոդների կիրառումը բարձրացնում է սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսում:

Հետազոտության խնդիրները

- Ուսումնասիրել աշակերտների,ուսուցիչների փոխհարաբերությունները մեթոդները կիրառելիս:
- Մշակել ուսուցման մեթոդների կիրառման արդյունավետ միջոցներ դասեր իրականացնելիս:
- Գնահատել երեխայի հետաքրքրությունների շրջանակը,ինչպես նաև՝ ուսուցչի մանկավարժական վարպետությունը,ստեղծագործական մոտեցումները ուսուցման մեթոդների կիրառման ժամանակ:

Կրթության կազմակերպման արդյունավետ մեթոդները

Մեթոդը գործունեության եղանակների և հնարների համակարգ է,որը հունարեն բառ է և նշանակում է ինչ-որ տեղ տանող ճանապարհ:Մեր օրերում այն գիտակցվում է որպես ուսուցչից դեպի աշակերտը գնացող մտքի ճանապարհ,ուսուցչի և աշակերտի համագործակցություն,սովորողների կողմից գիտելիքներին և հմտություններին տիրապետելու եղանակ:

Մարդկությանը միշտ էլ հուզել են կրթության և դաստիարակության խնդիրները:Ժամանակի հետ փոխվել են այդ բնագավառի պահանջները,մեթոդները և անխուսափելի են դարձել բարեփոխումները:

Ուսուցման ընթացքում մեթոդների կիրառումը պետք է ավելորդ ծանրաբեռնվածություն չառաջացնի սովորողների համար,դասավանդումը լինի հետաքրքիր,նպաստի երեխաների մասնակցությանը,մտքերի ազատ ու անկաշկանդ շարադրելու ձգտմանը:Այդ դեպքում դասապրոցեսը դառնում է արդյունավետ և տեսանելի:Աշխատանքը հետաքրքիր է և՛ ինձ,և՛ աշակերտների համար:Երեխաները լսում են դիմացինի խոսքը և հասկանում են:Անհրաժեշտ է աշխատանքը ներկայացնել պարզ,մատչելի և գրավիչ ձևերով:Արդյունավետ ուսուցում իրականացնելու համար հարկավոր է գործածել բազմազան մեթոդներ:

Ժամանակակից մանկավարժության մոտեցումների համաձայն՝ մեթոդի ընտրության վրա ազդող գործոնները բազմաթիվ են:Դա կախված է սովորողների տարիքից,կրթական նպատակներից,նյութի բովանդակությունից,առկա ռեսուրսներից:Ուսուցման մեթոդները հնարավորություն են ընձեռնում աշխատանքը երեխայի համար ցանկալի,հաճելի,իսկ ուսուցչի համար՝ արդյունավետ և ոգեշունչ դարձնել:Այդ դեպքում դասապրոցեսում ընդգրկվում են բոլոր երեխաները:

Մանկավարժության մեջ տարածված կարծիքի համաձայն ուսուցումը պետք է ունենա ստեղծագործական ուղղվածություն,որն ընկած է այն մեթոդների և միջոցների հիմքում,որոնց կիրառմամբ իրականացվում են ուսումնական գործընթացի բոլոր գործառույթները:Այս դեպքում սովորողները գիտելիք են ձեռք բերում և՛ ուսուցչի միջոցով,և՛ ընկերների միջոցով,և՛ ինքնուրույնաբար:Իմ աշխատանքում կարևորում եմ կարգապահությունը:Երեխաները սերտորեն կապված են միմյանց հետ,նրանք սիրով են հաճախում դպրոց:Բոլորս մշակել ենք դասարանի կանոնները.

- Լինենք կարգապահ
- Լինենք ուշադիր
- Լսենք յուրաքանչյուրի կարծիքը
- Չուշանանք դասերից
- Հարգենք միմյանց
- Առաջնորդվենք սովորել-սովորեցնել սկզբունքով

Հենվելով կանոններին՝ դասապրոցեսն անցկացնում ենք հետաքրքիր:Կիրառված ցանկացած մեթոդ ծառայում է նպատակին:Այդ դեպքում մեթոդները հնարավորություն են տալիս հասկանալով մասնակցել դասին:Յուրաքանչյուր ուսուցիչ,եթե ցանկանում է ուսուցման պրոցեսը դարձնել ավելի հետաքրքիր,մատչելի,բազմակողմանի,ակտիվ,պետք է օգտագործի տարբեր մեթոդներ,հնարներ,խաղեր:Մեթոդները բաղկացած են հնարներից և վարժություններից:Այժմ դիտարկենք մի քանի մեթոդներ,որոնք տարբեր դասապրոցեսների մեջ շրջանառվել են:

Պատմություն

Այս մեթոդը կիրառվում է ուսուցման բոլոր փուլերում,փաստական տեղեկությունների հաղորդման համար:Պահանջվում է շարադրանքի պատկերավորություն, հաջորդականություն:Մեթոդը կիրառվում է ուսումնառության առաջին օրերից,արդյունավետ է կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս:Կրտսեր դպրոցականների տարիքային խմբին հատուկ է պատկերավոր մտածողությունը,որի բուռն զարգացմանը կարող է նպաստել այս մեթոդի կիրառությունը:Մեթոդի առանձնահատկությունն այն է,որ ակտիվացնում է աշակերտների երևակայությունը, մտածողությունը, հիշողությունը, հուզական ապրումները:Առանձնացվում են պատմություն-մուտք,ընդարձակ պատմություն և պատմություն եզրափակում կամ ամփոփում:

Առաջին դասարանում «Այբբենարան»-ի ուսուցումն սկսվում է պատմությունից:Աշակերտների խոսքի զարգացման,ազատ և անկաշկանդ արտահայտվելու կարողությունների մշակման համար կան բազմաթիվ միջոցներ: Առաջին հերթին նկատի ենք ունենում ընձեռած հնարավորությունները :Ներկայացված թեմատիկ նկարները,նկար-պատմությունները,բառի վանկային ու հնչյունային կազմի

գծապատկերները խոսքի զարգացման պատմելու և կարդալու կարողության ձևավորման հիմքն են:Այս բաժինը կառուցված է այնպես,որ երեխաների մեջ արթնացնի հետաքրքրություն,սեր գրքի,դպրոցի նկատմամբ,սովորելու ցանկություն:Երեխաներն աստիճանաբար ներգրավվում են ուսումնառության մեջ,աննկատ ձևով զարգանում է նրանց մտածողությունը,բացահայտվում են ստեղծագործական ունակությունները,պատմելու կարողությունը:Շատ կարևոր է,որ երեխան հեռու մնա սերտողականությունից:Նկատի ունենալով,որ կրտսեր դպրոցականների մտածողությունը կոնկրետ է,պատմությունը պետք է ստեղծել զննական հիմքի վրա:Սակայն հարկավոր է նկատի ունենալ,որ աստիճանաբար պետք է զարգացնել նրանց վերացական մտածողությունը,որը սկսվում է պատմության գաղափարից:Երբ աշակերտները կարող են պատմել,նրանց բառապաշար է ներմուծվում պատմություն տերմինը,որպես խոսքի ամենափոքր միավոր:Հաջորդ փուլում աշխատանքներ են տարվում պատմության մասերի՝ նախադասությունների բացահայտման ուղղությամբ:Ուսուցիչը երեխաներին պատմում է մի փոքրիկ պատմություն՝ երեխաներին առաջարկելով հաշվել դադարները:Այնուհետև ասում է,որ դրանք պատմության մասերն են:Իմ կողմից փորձված հնար է,երբ պատմության տարբեր նախադասություններ նկարների տեսքով բաժանում եմ երեխաներին,ովքեր հնչեցնում են իրենց բաժին նախադասությունը:Այնուհետև այդ նկար-նախադասությունները փակցնում ենք մեկ պաստառի վրա և կազմում ենք ընդհանուր նկարը:Այնուհետև նշվում է,որ դա պատմություն է:Երեխաներըդեռևս չիմանալով գրել,կարդալ սովորում են պատմել:Այսպիսով զարգանում է խոսքը,պատմելու կարողությունը:
Կարելի է նաև յուրաքանչյուր դադարից հետո դնել նախապես պատրաստ թղթի շերտերը,որպես նախադասության մասեր:Այսպես գաղափար է տրվում պատմության հաջորդ միավորի՝ նախադասության մասին:
Մայրենիի ուսուցման կարևորագույն խնդիրներից է երեխաներին պատմել սովորեցնելը:Այս փուլում այն դիտվում է որպես ուսուցման նպատակ:
Պատմել սովորեցնելու խնդիրներն են.

- Պատմելու նախապատրաստում կամ ուսուցում
- Բովանդակության վերարտադրում կամ պատմում

Պատմելու նախապատրաստումը սկսվում է ընթերցված նոր նյութի մասերի բաժանելուց:Երեխաներին հանձնարարում եմ նկարել պատմությունը ըստ

պատմվածքի մասերի:Հետո հանձնարարում եմ նկարները դասավորել ըստ պատմության դեպքերի հաջորդականության:Երբեմն էլ նկարներով պատմելիս օգտագործում եմ պատրաստի նկարները:Օրինակ՝ Հովհ.Թումանյանի «Ծիտը» հեքիաթը պատմելու ժամանակ օգտվում ենք Վ.Սարգսյանի «Այբբենարան»-ում ներկայացված նկարներից,որտեղ տրված է այդ հեքիաթի նկար-պատմությունների հերթականությունը:Ես օգտագործում եմ նաև այս տարբերակը.նախապես կարդում եմ պատմությունը,այնուհետև նկարները դասավորում եմ խառնված և առաջարկում դասավորել հերթականությամբ:

Առաջին դասարանում օգտագործում եմ նկարներով պլանը,երկրորդ դասարանում նկարելով,իսկ երրորդ և չորրորդ դասարաններում կիրառելի է վերնագրելով պլանը:Պլանը լինում է երկու տեսակի.

- Համառոտ
- Ընդարձակ

Բովանդակության երկրորդ փուլը պատմելն է,որի տեսակներն են՝

- Մանրամասն(ավելի հեշտ է,նախատեսված է առաջին դասարանցիների համար):
- Պատմել համառոտ:Համառոտ պատմելու համարերեխաներին պետք է սովորեցնել ընթերցած յուրաքանչյուր պարբերությունում գտնել գլխավորը:
- Պատմել փոփոխելով(փոխել դեմքը,ժամանակըդեպքերի ընթացքը,հերոսների անունները)
- Պատմել ստեղծագործելով(աշակերտներին առաջարկվում է պատմել ստեղծագործելով,ավելացնել դեպքեր,հերոսներ)
- Պատմել ընտրովի
- Պատմել որպես մասնակից
- Պատմել շարունակելով

Պատմելու այս տեսակների ընտրությունը կախված է ուսուցչից և նրանից,թե ուսուցիչը ինչպես է երեխաներին սովորեցրել պատմել:Պատմելու այս ձևերը կիրառում եմ իմ դասաժամերին:Պատմելու նախորդող հարցազրույցն ու բառային աշխատանքը պետք է օգնեն երեխաներին պատմել:Պետք է սովորեցնել պատմել սկսել ճիշտ նախադասությունով:Որպես կանոն կրտսեր դպրոցականների համար դժվարը սկիզբն է:Պատմելիս պետք է ուշադիր լսել աշակերտին,չընդհատել,մղել ազատ խոսելու և

ամենակարևորը՝ խոսել գեղեցիկ բառերով,արտահայտել կապակցված միքտ:Կարելի է սովորեցնել նաև պատմությունն ավարտել ամփոփիչ նախադասությամբ: Կարդացածը պատմելու ուղղությամբ աշխատանքներն սկսվում են դեռևս գրաճանաչության երկրորդ փուլում,երբ յուրաքանչյուր հնչյուն-տառի ուսուցման ժամանակ աշակերտներին առաջարկվում է կարդալ փոքրիկ բնագրեր և վերարտադրել:Առաջին դասարանցիներից պահանջվում էպատմել միայն ընդարձակ,քանի որ հաառոտ պատմելուհամար նրանից պահանջվում է գլխավորը երկրորդականից տարբերելու կարողություն,որը շատ բարդ է առաջին դասարանցիների համար:Կարդացածը մանրամասն պատմելու համար նաև պետք է.

- Արտահայտիչ կարդալ առաջարկված նյութը,որոշել ինչի՞ մասին է,ինչպես նաև հիմնական միտքը:
- Որոշել բնագրի հենակետային բառերը,մտքերը:
- Ըստ հենակետային մտքերի բնագիրը բաժանել տրամաբանական ամբողջություն կազմող մասերի,վերնագրել այդ մասերը:

Դասանյութի ամփոփումը հիմնականում կատարվում է հարցազրույցով:Այդ ժամանակ պետք է պարզել,թե ինչպես ընկալվեց դասանյութը երեխայի կողմից:Իմ փորձը ցույց է տալիս,որ հատկապես առաջին դասարանում շատ է օգնումնկար-պատմությունները:Նկարները դնում եմ և առաջարկում եմ դասավորել:Բոլոր թեմատիկ խմբերը սկսվում են նկարներով:Յուրաքանչյուր մուտքի դասը ներկայացվում է համապատասխան նկարով,որոնք ամփոփում են ամբողջ բաժինը:Պատմելու կարողությանը նպաստում են դասնյութին կից նկարները:Օգտագործում եմ տարբեր խաղեր,հնարներ:Օրինակ՝«Խառնված նախադասություններ»խաղը օգնում է ճիշտ դասավորել պատմությունն ամբողջացնող նախադասությունները:Օգտվում եմ նաև «Ժամանակային շղթա»մեթոդից:Այս մեթոդը նպատակահարմար է օգտագործել դեպքերով ու գործողություններով հարուստ տեքստերի ժամանակ:

Պատմությունը կիրառվում է ուսուցման այլ մեթոդների համադրությամբ,ցուցադրությամբ,քննարկումներով,զրույցով:Եթե պատմության միջոցով չի հաջողվում ապահովել նյութի ըմբռնումը,ապա կիրառվում է բացատրության մեթոդը:

Բացատրություն

Սա ուսումնասիրվող առարկայի առանձին հասկացությունների օրինաչափությունների և առանձնահատկությունների բացատրությունն է,որին բնորոշ է շարադրանքի ապացուցողական բնույթը:Բացատրության մեթոդից հաճախ օգտվում են տարբեր գիտություններից տեսական նյութ ուսումնասիրելու ժամանակ:Այս մեթոդին ներկայացվում են որոշակի պահանջներ՝ հիմնահարցի ճշգրիտ և հստակ ձևակերպում,պատճառահետևանքային կապերի հաջորդական բացահայտում և ապացուցում,համեմատության,համանմանության կիրառում:Շատ դեպքերում բացատրությունը համատեղվում է դիտումներին,սովորողների և ուսուցչի կողմից ձևակերպված հարցադրումներին,որոնց դեպքում այն կարող է վերածվել զրույցի:

Զրույց

Զրույցը երկխոսության բնույթ ունեցող ուսուցման մեթոդ է,որի ընթացքում ուսուցիչը որոշակի հարցադրումների միջոցով աշակերտներին հասցնում է նոր նյութի ընկալմանը,ստուգում է նաև ուսուցանված թեմայի յուրացումը:Տարբերվում են հետևյալ տեսակի զրույցները.

- Անհատական զրույցներ
- Խմբային
- Ֆրոնտալ

Անհատական զրույցների դեպքում հարցերը հասցեագրվում են մեկ աշակերտի:Այս դեպքում դասին ընթացքում կարող է թեմայի շուրջ անցկացնել թե' աշակերտ-աշակերտ, թե' ուսուցիչ-աշակերտ տարբերակով:

Խմբային զրույցների դեպքում հարցերը ուղղվում են որևէ խմբի:Խմբի յուրաքանչյուր անդամ փորձում է տալ հարցերին ճիշտ պատասխաններ՝ լսելով և ընդունելով ընկերների կարծիքները:Այս դեպքում զրույցը կարելի է անցկացնել խումբ-խումբ, աշակերտ-խումբ տարբերակներով:

Ֆրոնտալ զրույցների ժամանակ հարցերը ուղղվում են բոլորին:Զրույցի մասնակիցները բոլորն են:Ֆրոնտալ զրույցը կիրառվում է դասի տարբեր փուլերում(խթանում,իմաստի ընկալում,կշռադատում և անդրադարձ):Զրույցն իր անցկացման ժամանակ իմաստով լինում է երեք տեսակ.

- Նախապատրաստական զրույց
- Ուղեկցող զրույց

- Ամփոփիչ զրույց

Նախապատրաստական զրույցը պետք է կազմվի կարճ,համոզիչ:Այն պետք է տրամադրի երեխաների նոր նյութի ընդգրկման և առաջացնի հետաքրքրություն: Նախապատրաստական զրույցի բովանդակությունն իր մեջ չպետք է ներառի ընթերցվող նյութից տարբեր:«Քիչ ենք ,բայց հայ ենք»բանաստեղծության ուսուցումից առաջ դասանյութի բովանդակության ընկալմանը նախապատրաստելու նպատակով դասը սկսեցի «Ով ենք մենք» ֆրոնտալ զրույցով:Աշակերտները զրուցեցին հայ ժողովրդի ծագման պատմությունից,գրեր գյուտից,մեր անցած պատմությունից և այսօրվանից:Վերջում ավելացրի ,որ հայրենիքը մենք ենք,մեր նախնիները,մեր ծնողները,մեր տունը,մեր լեզուն:Մենք հպարտ ենք մեր հայրենիքով:Այսպիսի զրուցով ակտիվացվում են նախկինում ձեռք բերած գիտելիքները,ստուգվում են նոր նյութի հաղորդման համար սովորողների պատրաստվածության աստիճանը: Ուղեկցվող զրույցը անցկացվում ընթերցվող բնագրին զուգահեռ:Ուսուցիչը կամ աշակերտը ընթերցում են ժամանակ առ ժամանակ ընդհատելով այն բացատրություն տալով,աշակերտներին ներգրավելով ընթերցվող նյութի վրա կատարվող տրամաբանական աշխատանքներին:«Քիչ ենք ,բայց հայ ենք»բանաստեղծության ուսուցման ժամանակ կարելի է անցկացնել զրույց ընթերցելուց հետո:Զրուցի ընթացքում աշակերտները քննարկում են բանաստեղծության բովանդակությունը՝ պատասխանելով հետևյալ հարցրին՝

- Ըստ բանաստեղծության ո՞ր հատկանիշներն են բնորոշ հայ ժողովրդին:
- Թվարկել հպարտություն առաջացնող խորհրդանիշները և պատմել թե ինչ գիտեն դրանց մասին:

Ամփոփիչ զրույցը անցկացվում է,երբ ավարտվել էբնագրի ընթերցանությունը,քննարկումը,կատարվել էբառային աշխատանք,բացահայտված են հերոսները,վեր է հանված գաղափարը:Այստեղ կրկին կազմակերպվում է հարց ու պատասխան:

Զրույցներն ըստ իրենց կազմակերպման եղանակների լինում են նաև՝

- Ակտիվ երկկողմանի զրույց
- Բացատրական կամ մեկնական զրույց
- Դիդակտիկական զրույց
- Հարցազրույց

Հարցազրույց

Հարցազրույցը կարող է անցկացվել մեկ մարդու կամ խմբի կողմից:Զրույցն անցկացնելիս կարևոր են հարցադրումների ճիշտ ձևակերպումները:Դրանք պիտի լինեն կարճ,հստակ բովանդակալից,տրամաբանորեն կապված լինեն միմյանց հետ,բացահայտեն ուսուցանվող նյութի ամբողջականությունը և էությունը:Կարևոր է,որ հարցերը բովանդակությամբ և ձևով համապատասխանեն սովորողների զարգացման աստիճանին:Պետք չէ ձևակերպել հուշող՝պատրաստի պատասխան պարունակող,կամ էլ միանշանակ «այո» կամ «ոչ» պատասխան ակնկալող հարցեր:Այս ամենի կողքին զրույցի մեթոդն ունի նաև թերություններ,պահանջում է երկարատև ժամանակահատված,եթե սովորողները չունեն որոշակի պտկերացումների և հասկացությունների պաշար,ապա զրույցն արդյունավետ չի կարող լինել:

Բանավեճ

Բանավեճը հենվում է որոշակի հիմնահարցի շուրջ կարծիքների և տեսակների փոխանակման վրա:Ուսումնական բանավեճի գլխավոր գործառույթը ճանաչողական հետաքրքրության խթանում է:Բանավեճի շնորհիվմասնակիցները ձեռք են բերում նոր գիտելիքներ,ամրապնդվում է սեփական կարծիքի ճշմարտացիության զգացումը,սովորում են պաշտպանել սեփական տեսակետը,հաշվի նստել ուրիշների հետ,հանդուրժել և ընդունել նրանց արտահայտած տեսակետները և կարծիքները:Այս մեթոդը կարելի է կիրառել այն դեպքում,երբ մասնակիցները ունեն թեմայի շուրջ համապատասխան գիտելիքներ,դրսևորում են ինքնուրույն մտածողության կարողություն:Առանց գիտելիքի բանավեճը կդառնա անիմաստ:

Աշխատանք դասագրքով

Սա ուսուցման կարևոր մեթոդներից մեկն է:Այս մեթոդի գլխավոր առավելությունն այն է,որ սովորողը ցանկացած ժամանակ իրեն հատուկ տեմպով նորից ու նորից կարող է կարդալ ուսումնական նյութը:Ծրագրավորված դասագրքեր կիրառելու դեպքում,որոնցում,բացի ուսումնական նյութից տեղ են գտնում կառավարող տեղեկություններ,արդյունավետորեն կլուծվեն գիտելիքների և կարողությունների ստուգման,շտկման և ախտորոշման հարցերը:Գրքով աշխատանքը կարող է կազմակերպվել ինչպես ուսուցչի անմիջական ղեկավարութամբ,այնպես էլ որպես

սովորողի ինքնուրույն աշխատանք տեքստի շուրջ:Այս մեթոդի շնորհիվ աշակերտները կարող են յուրացնել ուսումնական նյութը,ինչպես նաև ձեռք բերել աշխատանքի փորձ:Օրինակ «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները»թեման անփոփելիս աշակերտները պատրաստեցին զեկուցումներ՝ նախընտրած հրաշալիքի մասին թեմայով՝ օգտվելով համապատասխան աղբյուրներից /գրքեր,հանրագիտարաններ,տեղեկատվական այլ աղբյուրներ/:

Զննական մեթոդներ

Զննական են համարվում այն մեթոդները,որոնց միջոցով սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացումը կախում ունի դիտազննական պարագաներից և ուսուցման տեխնիկական միջոցներից:Զննականությունը հնարավորություն է ընձեռնում առարկաներին ծանոթանալ բնական վիճակում կամ սիմվոլների միջոցով:

«Իլյուստրացիա»

Մեթոդի կիրառման ժամանակ ուսումնական նյութը հաղորդելիս պատմելը,զրուցելը,բացատրությունը,դասախոսությունը զուգակցում են իլյուստրացիային,այսինքն՝ ցուցադրմանը:«Ես և շրջակա աշխարհը» առարկայի «Մայրցամաքներ և օվկիանոսներ» թեմայի ուսուցման հիմքում ընկած են դիտազննական պարագաները՝ քարտեզներ,պաստառներ,նկարներ,սլայդներ:

«Դեմոնստրացիա»

Ե'վ ուսուցումը,և' ամփոփումը կատարում եմ կիրառելով այս մեթոդը՝ ցուցադրելով ֆիլմեր:Այս դեպքում ցուցադրմանն ուղեկցում է շարժումը:Ահա սա է տարբերությունը իլյուստրացիայի և դեմոնստրացիայի միջև:Բայց և այնպես իմաստը մնում է նույնը՝ ցուցադրումը:Օրինակ՝ «Երկիրը մեր ընդհանուր տունն է» թեմայի ուսուցումը արդյունավետ կլինի,եթե կիրառվեն զննական մեթոդները:

Գործնական մեթոդներ

Գործնական աշխատանքները կազմակերպվում և իրագործվում են լայնածավալ թեմաներ ուսումնասիրելուց հետո:Այս դեպքում սովորողները կատարում են մտավոր և գործնական աշխատանք:Սրանք կատարվում են ուսումնական բոլոր առարկաներից:«Ես և շրջակա աշխարհը» առարկայի ուսուցման ժամանակ կատարվող գործնական աշխատանքները նյութը դարձնում են տեսանելի և հասկանալի:

Լաբորատոր մեթոդներ

Այս մեթոդները դասվում են գործնական մեթոդների շարքին և վերաբերում են առանձին դասընթացների,օրինակ՝ տարրական դասարաններում «Ես և շրջակա աշխարհը»:Լաբորատոր մեթոդների կիրառման ժամանակ կատարվում են փորձեր:Գործողությունները կրում են գործնական բնույթ:

Մթերքի մեջ օսլայի պարունակության մասին իմանալու համար կատարեցի փորձ: Յոդի լուծույթից մի կաթիլ կաթեցրեցի հացի և կարտոֆիլի վրա:Երեխաները տեսան,յոդը հացի և կարտոֆիլի վրա դարձավ կապտամանուշակագույն:Այդպես պարզեցինք,որ նշված մթերքները օսլա են պարունակում:

Աղը լցրեցինք բաժակով լցված ջրի մեջ և գդալով խառնեցինք:Տեսանք,որ խառնելու ընթացքում այն աստիճանաբար դարձավանտեսանելի:Այնուհետև փորձեցինք ջրի համը և զգացինք,որ այն աղի է:Աղը չի անհետացել,այն մնացել է բաժակում:Այն բաժանվել է մանրագույն մասնիկների,այսինքն՝ լուծվելով խառնվել է ջրի մասնիկների հետ:Հետևաբար՝ նյութերը և դրանցիցկազմված մարմինները կազմված են մանրագույն մասնիկներից:

Համագործակցային ուսուցում

Համագործակցությունը թույլ է տալիս սովորողներին ակտիվորեն մասնակցել ուսուցման գործընթացին: Համագործակցությունը սովորողների և ուսուցանվող նյութի միջև կապ է ստեղծում՝ օգնելով մտածել ավելի անաչառ:Խմբային աշխատանքները և քննարկումները այս դասավանդման մեթոդի օրինակներն են:Ներկայացնեմ դասավանդման ժամանակակից մի քանի օրինակներ,որոնք կիրառում եմ իմ աշխատանքում:

Ակտիվ ուսուցում. Բնութագրեր, ոճեր և ռազմավարություններ

- Ակտիվ ուսուցման բնութագրերը
- Ուսանողը ստանձնում է առաջատար դերը
- Ավելի շատ ջանք է պահանջում
- Ստեղծեք ավելի շատ գիտելիքներ, երբ կիրառվում են ճիշտ
- Բարելավում է ուսանողների հուզական հմտությունները
- Ակտիվ ուսուցման ոճեր
- Հիմնական ակտիվ ուսուցում
- Ռազմավարություն
- Հղումներ

Ակտիվ ուսուցում- Դա ուսուցման մի տեսակ է, որի ընթացքում ուսուցիչը փորձում է ուսանողներին ուղղակիորեն ներգրավել գիտելիքներ ստանալու գործընթացում: Տարբեր տեսակներ կան ՝ կախված ուսանողների ներգրավվածության աստիճանից, բայց բոլորի մեջ նրանք ստիպված են ավելին անել, քան պարզապես պասիվ լսել:Ակտիվության գործընթացի միջոցով ուսանողները կարող են ձեռք բերել ինչպես գիտելիքներ,հմտություններ,այնպես էլ վերաբերմունք:Դրա պատճառով այս տեսակի ամենալավ գործընթացներից մեկն է,որը գոյություն ունի:Բացի այդ տարբեր ուսումնասիրություններ հաստատում են,որ դա ուսանողների համար ամենաօգտակար ձևն է՝ ամրապնդելու իրենց նոր ուսումը:
Ուսուցման մեթոդների մեծ մասում ուսուցիչն է,ով պատասխանատու է սովորելու համար:Ընդհանրապես, ենթադրվում է, որ կրթություն ստացողը գիտելիքներ ունեցողն է, ուստի նրա խնդիրն է դրանք հնարավորինս արդյունավետ կերպով փոխանցել ուսանողներին:
Ակտիվ ուսուցման ժամանակ այդ դերերը հետ են շրջվում: Ուսանողները պետք է կարողանան գեներացնել իրենց սեփական գիտելիքները՝ առաջադրանքներ կատարելով կամ անդրադառնալով այն բանի վրա, ինչի վրա ուզում են աշխատել: Ուսուցիչը պարզապես օգնում է իր աշակերտներին, երբ նրանք բախվում են դժվարությունների:Քանի որ առաջնային դերը ընկնում է ուսանողների վրա ուսուցման ակտիվ գործընթացում ուսուցման այս մեթոդը պահանջում է ավելի շատ ներդրումներ

ուսանողների կողմից:

Օրինակ, նրանք պետք է ունենան մոտիվացիայի ավելի բարձր մակարդակ, կատարեն ավելի մեծ թվով գործողություններ և ավելի մեծ ուշադրություն դարձնեն իրենց արածին: Այս բնութագիրը նշանակում է, որ ակտիվ ուսուցումն ամենահարմարը չէ գոյություն ունեցող ուսանողների համար: Որոշ ուսանողներ կամ մոտիվացիայի ցածր մակարդակի կամ հմտությունների կամ կարողությունների բացակայության պատճառով, պարզապես չեն կարող բավարարել այս գործընթացը ճիշտ իրականացնելու համար անհրաժեշտ պահանջները:Հիշողության գործունեության հետ կապված բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ գիտելիք ստանալու լավագույն միջոցը գործողությունն է: Նոր բան սովորելու համար ընդհանուր առմամբ բավարար չէ այն լսել, տեսնել կամ կարդալ: Անհրաժեշտ է գործել, որպեսզի այն ամբողջությամբ ներկառուցվի և կայուն լինի:Այդ պատճառով, այն իրավիճակներում, երբ այն կարող է կիրառվել, ակտիվ ուսուցումն առաջացնում է շատ ավելի խորը և իմաստալից արդյունքներ, քան առավել ավանդական ուսուցման գործընթացները:Դա տեղի է ունենում ինչպես տվյալների և փաստերի ներքինացման փորձ կատարելիս, այնպես էլ նոր հմտություն կամ վերաբերմունք կիրառելիս:

Ակտիվ ուսուցում իրականացնելու համար ուսանողները պետք է կարողանան բարձր պահել իրենց մոտիվացիան, ձեռնարկեն գործողություններ և կատարեն առաջադրանքներ, որոնք կարող են բավականին բարդ լինել: Դրա շնորհիվ այս կրթական գործընթացն անուղղակիորեն զարգացնում է նաև նրանց հուզական կարողությունները:

Կախված նրանից, թե ինչ մեթոդով են ուսանողները կառուցում իրենց ձեռք բերած նոր գիտելիքները, հմտությունները կամ վերաբերմունքը, սովորաբար տարբերակվում է ակտիվ ուսուցման երեք տիպի `հիմնական, իրավիճակային և հիմնախնդիրների լուծում:

Ուսումնառության ակտիվ գործընթացներից շատերն այս կատեգորիայի մեջ են մտնում: Դրա հիմնական առանձնահատկությունն այն է, որ ուսանողներին ուսուցանվում է այն տեղեկատվությունը, հմտությունը կամ վերաբերմունքը, որը նրանք նախատեսում են ձեռք բերել, իսկ ավելի ուշ նրանց առաջ է գալիս մարտահրավեր, որի ընթացքում նրանք պետք է օգտագործեն այս նոր գիտելիքները:

Այս ակտիվ ուսուցման ոճում օգտագործվող մարտահրավերները կարող են շատ բազմազան լինել: Որոշ օրինակներ են ուսանողների շրջանում բանավեճերի

առաջացումը կամ ձեռք բերված նոր հմտությունների գործնական կիրառումը:
Ակտիվ ուսուցման այս տեսակը հիմնված է Լեւ Վիգոտսկու աշխատանքների վրա, ով պարզեց, որ գիտելիքների ստացումը կարող է ավելի արդյունավետ լինել, երբ մարդն ընկղմվում է մի համայնքում, որտեղ այլ անձինք փորձում են սովորել իրեն նման: Այս եղանակով իրավիճակային ակտիվ ուսուցումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ուսանողը հնարավորություն ունի փորձի, տպավորությունների կամ գաղափարների փոխանակում այն թեմայի շուրջ, որը նա փորձում է տիրապետել նույն ուղու վրա գտնվող այլ մարդկանց:
Երբ նման իրավիճակ լինի, որոշ ուսանողներ կստանձնեն «ուսուցչի» դեր, իսկ ավելի նորերը կսկսեն հիմնականում լսել, հարցեր տալով և իրավիճակներ ներկայացնելով: Ամանակի ընթացքում նրանց գիտելիքների մակարդակը կբարձրանա, մինչև նրանք կարողանան նաև ստանձնել ուսուցիչների դերը:
Այսպիսով, ուսանողները պետք է կարողանան գտնել այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է խնդիրը լուծելու համար, և հայտնաբերելու, թե ինչ գործողություններ պետք է իրականացնեն: Եթե դրանք հաջողության հասնեն, կլինի երկարատև և արմատավորված ուսուցում:
Կան բազմաթիվ ռազմավարություններ, որոնց կարելի է հետևել `ակտիվ ուսուցումը խրախուսելու համար: Դրանց մեծ մասը կարող է իրականացվել ավանդական դասարանում, հատկապես նրանք, որոնք կապված են այս ուսուցման ոճի ամենահիմնական մոդելի հետ: Ամենակարևորներից մի քանիսը հետևյալն են.
- Ուսանողներին ուսուցիչների դերի մեջ դնել այնպես, որ նրանք սովորածը փոխանցեն իրենց դասընկերներին:
- Ուսանողներին հանձնարարեք քննարկել իրենց ձեռք բերած գաղափարները, որպեսզի նրանք կարողանան տեսնել այլ հեռանկարներ և դրանք ավելի արդյունավետ ներդնել:
- Առաջարկեք խնդիրներ, որոնք ուսանողները պետք է կարողանան լուծել դասի ընթացքում ձեռք բերած նոր հմտություններով կամ գիտելիքներով:

Ուսուցման ակտիվ մեթոդներ

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

- Համախմբել դասախոսության ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,
- Կատարելագործել արդեն ձեռք բերած մասնագիտական հմտությունները,
- Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ուսանողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և ուսանողների միջև, այնպես էլ իրենց,

ուսանողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է ուսանողների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է ուսանողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ:

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Մարդու կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ, աչքերին՝ թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները: Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով: Հետևաբար տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց: Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է: Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի անվանման հիմքը անգլ. action- փոխազդեցություն բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ

հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ:

Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք խմբային: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի

բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: ԵՎ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն ԱՈՒՄ հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն: Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման, կամ էլ առարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելու համար:

Ակտիվ ուսուցման մեթոդները – մեթոդներ են, որոնք նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՈՒՄ-ը բնութագրվում է ուսանողների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՈՒՄ-ը – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: ՈՒԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ՈՒԱՄ-ի կրառմամբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները

պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- Ուսումնական դրական խթանի ձևավորում,
- Ուսանողների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Ուսանողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,
- Ուսանողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

1.Մտքերի տարափ կամ մտագրոհ

Այս մեթոդը խմբային աշխատանքի պարզագույն,բայց արդյունավետ մեքոդ է:Խմբի անդամների առջև խնդիր է դրվում. Նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է սեփական տեսակետները՝ թեմայի շուրջ:Բոլոր մտքերն ու գաղափարները գրանցվում են մաքուր թղթի կամ գրատախտակի վրա:



Այս մեթոդը հաճախ են կիրառում դասի խթանման փուլում, որին կարելի է տրամադրել մինչև 10 րոպե: .

Այսպես վեր եմ հանում աշակերտների ունեցած գիտելիքները թեմայի շուրջ:Բառը գրում եմ գրատախտակին և աշակերտն ասում է այդ բառի շուրջ ծագած առաջին իսկ միտքը,բառը:

Այս մեթոդի կիրառման ընթացքում վերլուծական անհրաժեշտություն չկա,քանի որ պահանջվում է միայն նյութին վերաբերող մտքեր արտահայտել և գրանցել:Այս մեթոդը նպաստավոր է երևակայությունը զարգացնելու,լսելու,հմտություններ ձևավորելու համար,ակտիվացնում է աշակերտներին,ինքնավստահություն է ներշնչում նրանց:Կարևորվում է յուրաքանչյուրի միտքը,բոլոր մտքերն ընդունելի են,մասնակիցները հավասար են:

2.Վեննի դիագրամ

Վեննի գծապատկերը կառուցվում է երկու կամ ավելի շրջանագծերով,որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում:Այն կարելի է օգտագործել տարբեր մարդկանց,առարկաների և երևույթների տարբերությունները կամ ընդհանրությունները ցույց տալու նպատակով:Տարրական դասարաններում Վեննի գծապատկերը պիտի

կառուցել երկու շրջանագծով:Արդյունավետ է հերոսների,նրանց արարքների,գործողությունների համեմատություն կատարելու,նրանց համեմատական բնութագիրը կազմելու համար:Վեննի դիագրամը արդյունավետ է հատկապես կշռադատման փուլում:



Այս մեթոդը կիրառում եմ մաթեմատիկայի«Պատիկ,բազմապատիկ»թեման ուսումնասիրելիս:Օրինակ՝ 2,4,6,8,10,16,20 թվերը :Խմբավորել այնպես,որ մի խմբում լինի 2-ի,մյուսում՝ 4-ի պատիկ թվեր:

2 4



3.ԳՈՒՍ աղյուսակ

ԳՈՒՍ(գիտեմ-ուզում եմ իմանալ-սովորեցի),երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ է,որը կարող է դառնալ աշակերտի ուղեցույցը նյութը ուսումնասիրելու ժամանակ:Աղյուսակը գծում եմ կամ մեծ թղթի վրա,կամ գրատախտակին:Աղյուսակի կիրառումը հնարավորություն է տալիս լայնածավալ աշխատանք իրականացնելու՝ անդրադառնալով թեմատիկ խմբի բոլոր տեքստերի բովանդակությանը,հերոսների հիմնական առանձնահատկություններին,բառապաշարին,արժեքներին:Սովորողները ոչ միայն ձեռք են բերում գիտելիքներ,իրենց մեջ զարգացնում են կարողություններ,այլևս

հասունանում են որպես սովորողներ,զգում են սովորելու իրական հաճույքը «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքներ» թեմատիկ խմբի ուսումնասիրություն մուտքի դասը անցկացրեցի ԳՈՒՍ աղյուսակով:Աշակերտներն առաջին և երկրորդ սյունակներում լրացրեցին այն,ինչ գիտեն Հայաստանի մասին:

Գիտեմ	Ուզում եմ իմանալ	Սովորեցի
• Հայաստանը մեր հայրենիքն է • Հայաստանը լեռնային երկիր է • Հայաստանում կան շատ հրաշալիքներ	• Ուզում եմ ծանոթանալ հայաստանի հրաշալիքներին: • Ուզում եմ իմանալ իմ պապերի,նախապապերի մասին	

Աղյուսակի երրորդ սյունակում գրում են օրվա թեմայից ստացած գիտելիքները:Այս աղյուսակը կարելի է օգտագործել ամբողջ թեմատիկ խումբն ուսումնասիրելիս՝ յուրաքանչյուր անգամ ավելացնելով անցած նոր նյութից ստացած գիտելիքները:Աղյուսակին կարելի է անդրադառնալ թեմատիկ խումբն ամփոփելիս:

4.Կանխատեսումներ զույգերով

Այս մեթոդն կիրառելի աշակերտների մեջ առաջանում է հետաքրքրություն ուսուցանվող նյութի նկատմամբ:Նոր դասի հաղորդման ժամանակ գրատախտակին գրում եմ դասանյութից ընտրած 4-5 բառ (Մատենադարան,մագաղաթ,գրիչ,ծաղկող,ձեռագրատուն):Աշակերտներն իրենց զույգերի հետ կանխատեսումներ են անում,թե դասի թեման ինչի մասին կարող է լինել,և այդ բառերն ինչպես կարող են օգտագործված լինել դասում:Տրամադրում եմ հինգ րոպե քննարկումների և գրառումների համար:Օրինակ՝

- ✓ Գրում էին մագաղաթի վրա:
- ✓ Ծաղկողները նկարազարդում էին:
- ✓ Պահպանվում են Մատենադարանում:

Այնուհետև ընթերցում են դասանյութը:Ընթերցելուց հետո քննարկումներ կատարելիս անդրադառնում ենք կատարած կանխատեսումներին՝ արդյոք իրենք ճի՞շտ էին կանխագուշակել,թե՞ ոչ:

5.Քառաբաժան

Այս մեթոդը կարելի կիրառել դասի կշռադատման փուլում:Երկրորդ դասարանի «Մայրենի»-ի «Չնվաճված աշխարհամասը» բնագիրն ուսումնասիրելիս կիրառել եմ «Քառաբաժան»մեթոդը: Մեթոդն արդյունավետ էր,քանի որ աշակերտները հարցերի միջոցով ամփոփեցին դասանյութը.

Ի՞նչ տեսաք,ի՞նչ հասկացաք: Մենք ուժեղ ենք,թույլ չենք տա թշնամին ոտք դնի մեր հողերի վրա:	Ի՞նչ զգացումներ ունեցաք: Մեծ ցավ ապրեցինք: Մենք միշտ մեր զինվորի հետ ենք:Դա մի տխուր պատմություն է:
Գրել տուն բառով հնգյակ: Տուն Ամուր,կանգուն Պաշտպանող,կանչող,նվաճող Ես կպաշտպանեմ իմ տունը: Հայրենիք	Ինչպես կվերնագրեիք բնագիրը: «Իմ տունը» «Մեր հայրենիքը» «Կարոտ»

6.Հնգյակ

Հնգյակը բանաստեղծություն է,որի ստեղծման համար անհրաժեշտ է ստացված տեղեկատվությունը,գիտելիքները համադրել ու արտահայտել դիպուկ արտահայտություններով :Այն ունի ուղեցույց.

- Առաջին տողը մեկ բառ է,որը նկարագրում է հասկացությունը(գոյական):
- Երկրորդ տողը բաղկացած է երկու բառից(ածականներ,որոնք բնորոշում են հասկացությունը):
- Երրորդ տողը բաղկացած է երեք բառից(արտահայտում են հասկացության գործողություններ):

- Չորրորդ տողը բաղկացած է չորս բառից կազմված արտահայտություններից,որոնք ցույց են տալիս հասկացության նկատմամբ զգացմունք կամ վերաբերմունք:
- Հինգերորդ տողը մեկ հոմանիշ բառ է,որն այլ կերպ է արտահայտում նույն հասկացությունը:

Հայաստան

Հին,նոր

Շենացող,մեծացող,հզորացող

Ես սիրում եմ Հայաստանը

Բնօրրան

7.Հեղինակի աթոռ

Այս մեթոդը շատ կիրառում եմ՝ սովորողներին հնարավորություն տալով ինքնադրսևորվելու ,նրանց մեջ պատասխանատվության զգացումը մեծացնելու,սեփական խոսքը ներկայացնելու կարևորության գիտակցումը:Օրինակ՝ «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները» թեմատիկ խմբի ամփոփման ժամանակ առաջադրեցի հորինել պատմություն՝ «Խոսում են հրաշալիքները»(չորրորդ դասարանի «Մայրենիի»դասագրքից)նկարի շուրջ:Յուրաքանչյուր աշակերտ իր գրած նյութը ներկայացրեց ոչ թե տեղից,այլ կենտրոնում դրված աթոռին նստած:Դա խթան հանդիսացավ սեփական խոսքին հետևելու ,խոսքի արժեքը գիտակցելու համար:

8.Կենսագրական բանաստեղծություն

Այս մեթոդըօգտագործում եմ բնագրի հերոսներին բնութագրելիս:
Կենսագրական բանաստեղծություն

Անունը	Հայկ
Ով է	Նահապետ
Ինչպիսի՞ն է(նկարագրել արտաքինը)	Ուժեղ,հաղթանդամ,լայնաթիկունք
Ինչպիսի՞ն է(նկարագրել ներքինը)	Բարի,հոգատար,մտահոգ
Ի՞նչ է արել:Ինչո՞վ է հայտնի:	Նա կռվել է Բելի հետ:

Դասի պլան 1

Ուսուցչի անունը՝ Լիանա Ղարաքեշիշյան

Առարկան՝ Մայրենի

Թեման՝ «Մատենադարան»

Դասի տիպը՝ Ամրապնդման դաս

Նպատակը՝ 1.Գիտելիքի համակարգում-Իմանա նոր բառեր և իմաստներ՝ Մատենադարան,մագաղաթ,գրիչ, ծաղկող, ձեռագրատուն:
Իմանա Մատենադարանի,այնտեղ պահվող ձեռագրերի մասին, ինչպես նաև մագաղաթ պատրաստելու և գրքեր գրելու եղանակի մասին:

2.Կարողություն և հմտություն-Կարողանա հասկանալով և սահուն ընթերցել բնագիրը,բնագրից առանձնացնել անհրաժեշտ փաստերը: Ներկայացնել հնում մագաղաթի պատրաստման և գրքի գրության եղանակը:
Կարողանա պատմել Մատենադարանում պահվող ձեռագրերի «Կենսագրությունը»:
Կարողանա գործնականում ճանաչել և տարբերել հատուկ և հասարակ գոյականները, կազմել տրված գոյականների հոգնակի ձևը:

3.Արժեքային համակարգ- Աշակերտը պետք է ճանաչի և արժևորի ազգային արժեքները,մշակութային գանձերը:
Գնահատի գրքի դերը անհատի ր ժողովրդի կյանքում:
Ջգտի սիրով և խնամքով վերաբերվել գրքին:

Խնդիրները-Զարգացնել կապակցված խոսքը,բառանյութի իմացության ամրապնդում:

Վերջնարդյունք՝ Կիմանա համապատասխան տեղեկություններ Մատենադարանի մասին:Կսովորի մագաղաթ,ծաղկող,գրապահոց,գրադարան, ձեռագրատուն բառերը:
Կիմանա հատուկ և հասարակ գոյականները:

Կահավորումը-Մատենադարանի մեծ նկարը,ասույթով պաստառ,մարկեր,թղթեր

Խթանման փուլ- Ստուգել տնային աշխատանքները

Մտագրոհի միջոցով բացահայտել աշակերտների մտքում Մատենադարան բառի առաջացած զուգորդումները:Պարզել,թե ի՞նչ գիտեն Մատենադարանի մասին:

Այնուհետև՝ Երեխանե'ր,պատկերացրեք դուք գտնվում եք մի տեղ,որտեղ հայերեն չգիտեն,բայց պետք է հասկացնենք,որ Հայաստանից եք:Դա պետք է արվի նկարի միջոցով:Տրվում է 2-3 րոպե: Դնել երեխաների նկարները:Իսկ ինչու՞ ինձ չեք հարցնում,թե ես ի՞նչ կնկարեմ:Ես կնկարեմ Մատենադարանը,որովհետև այն աշխարհի հնագույն և ճանաչված ձեռագրատներից է:Փակցնել նկարը և վերլուծել Մատենադարան բառը:Բացատրել ձեռագրատուն բառը:

1. Ինչո՞ւ է այն կոչվում ձեռագրատուն:
2. Ինչպե՞ս էին կոչում ձեռքով գրողներին:
3. Ինչպե՞ս էին կոչում գրքերը նկարազարդողներին:
4. Այժմ ինչի՞ վրա են գրում:
5. Ու՞մ անունն է կրում Մատենադարանը:
6. Ու՞մ արձաններն են կանգնեցված Մատենադարանի առջև:
7. Ի՞նչ կպատմեք ամենամեծ և ամենափոքր գրքերի մասին:

Ֆիզ դադար

Իմաստի ընկալում-Կարդալ տեքսը,կատարել ընտրովի ընթերցանություն:

Կատարել տեքստային աշխատանք

Կշռադատման փուլ-Դնել իմաստախոսությունը և վերլուծել.

«Այն տունը,որտեղ գրքեր չկան,նման է հոգուց զրկված մարմնի»

Ասել ասացվածքներ,ասույթներ գրքի մասին:

Դասը հանձնարարել սովորել պատմել:

Բաժանվել խմբերի,կատարել խմբային աշխատանք/քերականություն/:

Ստուգել և գնահատել աշխատանքները:

Դասի ընթացքը՝ 45 րոպե

Դասի պլան 2

Ուսուցչի անունը՝ Լիանա Ղարաքեշիշյան

Առարկան՝ Մայրենի

Թեման՝ «Քաջ Նազարը»

Դասի տիպը՝ Ընթերցանության

Նպատակը՝

1.Գիտելիքի համակարգում-Պետք է իմանա հեքիաթի տեսակները:Իմանա,թե հեքիաթները քանի խմբի են բաժանվում:Իմանա,թե ովքեր են հեքիաթներ գրել :

2.Կարողություն և հմտություն-Կարողանա պատասխանել տրված հարցերին, պատմել Թումանյանի մասին:
Ասել,թե ինչ ստեղծագործություններ է գրել,բերել օրինակներ:
Կարողանա կարդալ ճիշտ առոգանությամբ,
կատարել ընտրովի ընթերցանություն,կարդալ դերերով:
Կարողանա կատարել քերականական աշխատանք:

3.Արժեքային համակարգ- Արժևորի ժողովրդական և հեղինակային հեքիաթների առանձնահատկությունները:

Խնդիրները-Զարգացնի կապակցված խոսքը, ամրապնդի բացականչական նախադասությունը(նկարներից դատողություններ կատարելով ասել,թե որն ինչ է արտահայտում):

Անհրաժեշտ պարագաներ- Թումանյանի հեքիաթների նկարները:

Վերջնարդյունք՝ Կիմանա հեքիաթի տեսակները,կամրապնդեն Թումանյանի մասին ունեցած տեղեկությունները:
Կկարողանա կատարել քերականական աշխատանք:

Խթանման փուլ-1.Քանի՞ տեսակ են լինում հեքիաթները:
2.Ի՞նչ մեծ երկու խմբի են բաժանվում հեքիաթները:
3.Հեքիաթագիրներից ու՞մ գիտեք:

4.Դնել նկարները,ասել հեքիաթի վերնագրերը,նրանց գլխավոր իմաստը:

5.Թումանյանի մասին հարցադրումներ:

6.Ասել նրա ստեղծագործություններից:

7.Անդրադառնալ «Քաջ Նազարը»հեքիաթին:

Իմաստի ընկալում—Կարդալ հեքիաթը:Կարդալ դերերով:

Կատարել ընտրովի ընթերցանություն

1-ին շարք-«Գրականագետներ»/գնահատել/

Խումբը հեքիաթից դուրս գրի բարբառային բառերը և դրանք վերափոխի գրական հայերենի:

2-րդ շարք-«Հեքիաթասացներ»/գնահատել/

Նազարի «քաջագործությունների» մասին մի երկու նոր դեպք հորինի և գրի:

3-րդ շարք-«Երևակայողներ»/գնահատել/

Գրել,թե ինչ կլիներ,եթե Նազարը գար Երևան:

Կշռադատման փուլ- Հեքիաթին վերնագիր դիր:Ո՞րն է հեքիաթի հիմնական միտքը:

Տնային հանձնարարություն- Սովորել պատմել,նկարել որևէ հատված:

Դասի ընթացքը՝ 45 րոպե

Տարրական դասարանում շատ գործածական է հատկապես «Մտագրոհ» կամ «Մտքերի տարափ»մեթոդը:Այս մեթոդը խմբային աշխատանքի պարզագույն,բայց արդյունավետ մեթոդներից է:Այն կիրառելու ժամանակ ակտիվանում են երեխաները:Նարեկը,Նարեն,Սուրենը,Տարոնը,ովքեր չէին մասնակցում, մտագրոհի ժամանակ շատ ակտիվ էին:Իմ կարծիքով այս մեթոդն ավելի հեշք է ընկալվում երեխաների կողմից,ինքնավստահություն է ներշնչում նրանց,քանի որ յուրաքանչյուրի արտահայտած միտքը գրանցվում է:Աշակերտները մեկը մյուսին լսելով նոր մտքեր են առաջանում:Նրանք նույնիսկ ցանկություն են հայտնում մի քանի անգամ պատասխանելու:

Եզրակացություն

Ուսուցման պրոցես ասելով ամենից առաջ հասկանում ենք գիտելիքների հաղորդում,ձեռքբերում,մարդու համար կենսական նշանակություն ունեցող կարողությունների ,հմտությունների,արժեքային համակարգի դրսևորում:Գիտելիքը ձեռք է բերվում որպես շրջապատի ճանաչման միջոց,որպես գիտելիք կամ տեղեկություն մարդկության անցյալի,ներկայի,ապագայի,նշանավոր դեպքերի,դեմքերի,բնության,բուսական ու կենդանական աշխարհի,գիտության տարբեր բնագավառների ու տեխնիկայի մասին:

Տարրական դասարաններում ուսուցման գործընթացում կիրառվում են արդյունավետ մեթոդներ և մոդելներ,որոնք ուսուցանվող նյութը դարձնում են ավելի մատչելի և դրուրամարս:

Հետազոտական աշխատանքը նպաստում է,ուսումնական գործընթացը հեշտացնելու,ուսումնասիրած մեթոդներով դասեր պլանավորելու և հմտորեն կազմակերպելու գործունեությանը:

Աշխատանքի ընթացքում խորացան և ամրապնդվեցին մեթոդների արդյունավետ օգտագործման նորանոր ձևեր: Ձևավորվեցին կիրառման հմտություններ:

Ուսումնասիրելով մեթոդները՝ կարելի է ասել,որ դրանց ճիշտ և տեղին կիրառումը հանգեցնում է ուսուցման որակի բարձրացմանը,սովորողի մեջ ձևավորում է նոր գաղափարներ,հետաքրքրություններ:

Ուսուցման հիմնական նպատակը բազմապիսի ու բազմակողմանի գիտելիքեների հաղորդումն է ու ձեռքբերումը,երեխաների մեջ բոլոր կարգի կարողությունների ձևավորումը:Ժամանակակից մարդուն անհրաժեշտ գիտելիքների ծավալը աճում է խիստ և արագ:Աշակերտների մեջ գործնական կարողությունների մշակման պրոցեսի կազմակերպումը հատուկ արժեք է ստացել:Այս ամենի հիմքում ընկած է ուսումնական գործունեության ճիշտ և նպատակային կազմակերպումը:Ուսումնական գործունեության մեջ կան բազմապիսի մեթոդներ և հնարներ:Այդ մեթոդներն ու հնարները խթանում են ուսուցման արյունավետությունը:Ուսուցումը ընթանում է աշակերտի կատարած մտածված,հետևողական աշխատանքի շնորհիվ:

Անվանի հոգեբան Ի.Լինհարտը ասել է.«Ճանաչողության բարձրագույն ձևերը ծագում են ոչ թե անմիջական զգայություններից ու ընկալումներից,այլ գործունեության ընթացքում(սովորելիս),զգայաշարժողական կառուցվածքի հիման վրա,որով և

ավարտվում է մտավոր գործողությունը» : Ուսումնական գործընթացում առաջարկվող մեթոդները տարբեր են:Դասի յուրաքանչյուր փուլում հնարավոր է օգտագործել բազմապիսի մեթոդներ և հնարներ:Անհրաժեշտ է ճիշտ և տեղինկատարել մեթոդի ընտրությունը:Մեթոդի օգտագործումը պետք է չափավորված և կշռադատված լինի.դրանց անտեղի ու չափից ավելի օգտագործումը օգուտիփոխարեն,ընդհակառակն,մեծ վնաս կարող է հասցնել ուսումնական աշխատանքին:

Առաջարկում եմ՝ընդլայնել ուսումնական գործընթացում ակտիվ մեթոդների հնարների և խաղերի կիրառումը,ուսումնասիրել և կիրառել նորանոր մեթոդներ,աշխատել ձևավորող գնահատման շեշտադրմամբ,բացահայտել աշակերտի կարողություններն ու հմտությունները,որոնք հիմք կդառնան ուսումնական գործընթացում,ստեղծել պայմաններ,որոնք կխթանեն ուսուցչի գործունեությունը:

Կրթության հիմնական նպատակը աճող սերնդի նախապատրաստումն է պագային:Ուսուցումը դառնում է դյուրին,երբ ընթացքը աշակերտի համար գրավիչ է ու հաճելի:Իսկ դրա համար անհրաժեշտ է ,որ մենքկարողանանք,ըստ նախասիրությունների և ընդունակությունների,ճիշտ ընտրել գործունեության ձևը:

Օգտագործված գրականություն և հղումներ

- Ա.Ե.Տեր-Գրիգորյան«Ուսուցման նոր ձևերի անհրաժեշտությունը» Երևան-1986«Լույս»
- Ա.Ե.Տեր-Գրիգորյան«Քերականության մեթոդիկա» Երևան-«Լույս»Հրատարակչություն 1977
- Մեթոդներ և հնարներ https://www.facebook.com/noravanschool/photos/a.1383790015208103/2459889937598100/?type=3&locale=ms_MY
- Համագործակցային ուսուցում https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B4%D5%A1%D5%A3%D5%B8%D6%80%D5%AE%D5%A1%D5%AF%D6%81%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B8%D6%82%D5%B4
- «Նախաշավիղ»1-2. 2007
- «Նախաշավիղ»6. 2009
- Балаев А.А. Активные методы обучения. М., 2006
- Смолкин А.М. Методы активного обучения. М., 1991.
- Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002
- Выготский Л.С. Педагогическая психология.
- Հղում՝ https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80
- Հղում՝ https://hy.warbletoncouncil.org/aprendizaje-activo-9594